ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՀՔԱՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ***ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ***

## ***2012 թ. 6 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ***



Այսօր թմրամոլությունը և թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը հանդիսանում են առանց բացառության երկրագնդի բոլոր երկրների գերխնդիրներից մեկը, որը պահանջում է միասնական մոտեցում, հստակ ռազմավարություն և ամենակարևորը ՝ ուժեղ կամք այդ չարիքի դեմ պայքարելու և այն արմատախիլ անելու համար:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, ավելի հակիրճ - թմրաբիզնեսը, դրան հետևանք թմրամոլությունը որպես տարածական և որպես խիստ հակահասարակական ուղղվածություն ունեցող երևույթներ համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում են: Այնքանով որ, իրենց ծավալներով և մասշտաբներով դրանք ներառել են բոլոր աշխարհամասերը, ժողովուրդների, անկախ վերջիններիս ազգությունից, սեռից, դավանանքից և սոցիալական պատկանելիությունից:

ՄԱԿ-ի 2011թ. <<Թմրամիջոցների մասին համաշխարհային զեկույցը>> լավագույնս արտացոլում է թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համաշխարհային շարժը: Ըստ այդ զեկույցի 2010թ. ընթացքում երկրագնդի 15-64 տարեկան բնակչության մոտ 3.5% - 5.7% կամ 155-ից 250 միլիոն մարդ գոնե մեկ անգամ օգտագործել են արգելված թմրամիջոց՝

1.կանեփ (կանաբիս)՝ 156.2 մլն մարդ

2.ամֆետամինային հոգեխթանիչներ՝ 37.9 մլն մարդ

3.ափիոնային թմրամիջոցներ (հերոին, մորֆին և ափիոն)՝ 15.2 մլն մարդ

4.կոկաին՝ 13.3 մլն մարդ: Թմրամիջոցների չարաշահման հետևանքով տարեկան մահանում է 7.3 մլն մարդ:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված տարեկան եկամուտը կազմում է 200 մլդ դոլար:

Աշխարհում քրեական հանցագործությունների կեսից ավելին կատարվում են թմրամիջոցների ազդեցության տակ:

Չնայած, համաշխարհային հանրության կողմից ձեռնարկվող միջոցառումներին, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի արդյունավետությունը առ այժմ դեռ բարձր չէ:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հակազդումը՝ կապված տարբեր երկրների ակտիվ քաղաքական, տնտեսական, մշակութային ինտեգրացման հետ, մեկ երկրի, առավել ևս մեկ ծառայության շրջանակներում հնարավոր չէ լուծել: Դա դեմ պայքարելու համար անհրաժեշտ է բոլոր երկրների և շահագրգիռ ծառայությունների բազմակողմանի համագործակցություն:

2012թ. 6 ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումները համագործակցելով շահագրգիռ գերատեսչությունների հետ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հայտնաբերել են **575** հանցագործության դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ **871** դեպքի դիմաց: Գրանցվել է նվազում **296** դեպքով կամ 34.0 տոկոսով: Գրանցվել է վարչական իրավախախտումների **142** դեպք՝ նախորդ տարվա 6 ամիսներին հայտնաբերված **124** դեպքի դիմաց:




Գրաֆիկ 1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների և իրավախախտումների պատկերը

| ՀՀ քր. օր-ի հոդվածներ | | 2011 թ. 6 ամիս | 2012 թ. 6 ամիս | +, - | տոկոս |
|---|---|---|---|---|---|
| 266-274 հոդվածներ | | 871 | 575 | -296 | 34.0 |
| Այդ թվում | 266 և 1 և 2 մասեր | 383 | 224 | -159 | 41.5 |
| | 266 և 3 մաս | 69 | 35 | -34 | 49.2 |
| | 266 և 4 մաս | 23 | 12 | -11 | 47.8 |
| | 267 և | 1 | 0 | -1 | 100.0 |
| | 268 և | 393 | 300 | -93 | 23.6 |
| | 269 և | 2 | 3 | +1 | 50.0 |
| | 270 և | 0 | 0 | | |
| | 272 և | 0 | 0 | | |
| | 273 և | 0 | 0 | | |
| | 274 և | 0 | 1 | +1 | 100.0 |

Աղյուսակ 1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները՝ ըստ ՀՀ քր. օր-ի հոդվածների

Նշված **575** դեպքերից **271**-ը կազմում են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել է նվազում **204** դեպքով կամ 42.9 տոկոսով /2011թ. 6 ամիսներին ` **475** դեպք/:




Գրաֆիկ 2. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի իրացման հետ կապված հանցագործությունների պատկերը /ՀՀ քր. օրր-ի 266 հոդված/




Գրաֆիկ 3. 1998–2011թթ. ընթացքում հանրապետությունում հայտնաբերված թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների գրաֆիկական պատկերը

| Ոստիկանության ՄՎ, բաժին | ընդամենը | | հանցագործութ | | իրավախախտում | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2011 | 2012 | 2011 | 2012 |
| Շենգավիթ | 30 | 44 | 24 | 37 | 6 | 7 |
| Էրեբունի | 73 | 57 | 69 | 44 | 4 | 13 |
| Կենտրոնական | 175 | 95 | 175 | 92 | 0 | 3 |
| Արաբկիր | 127 | 55 | 118 | 43 | 9 | 12 |
| Մալաթիա | 83 | 26 | 79 | 17 | 4 | 9 |
| Նոր Նորք | 51 | 76 | 39 | 69 | 12 | 7 |
| Մաշտոց | 9 | 27 | 9 | 25 | 0 | 2 |
| Քանաք-Զեյթուն | 28 | 10 | 22 | 6 | 6 | 4 |
| Մետրոպոլիտեն | 1 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| *ԵՐԵՎԱՆԻ ՈՎ* | *577* | *391* | *536* | *334* | *41* | *57* |
| Աշտարակ | 11 | 14 | 11 | 7 | 0 | 7 |
| Ապարան | 2 | 1 | 2 | 1 | 0 | 0 |
| Արագած | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Թալին | 4 | 0 | 3 | 0 | 1 | 0 |
| *ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՈՎ* | *18* | *15* | *17* | *8* | *1* | *7* |
| Արտաշատ | 15 | 10 | 10 | 6 | 5 | 4 |
| Արարատ | 17 | 13 | 9 | 6 | 8 | 7 |
| Մասիս | 32 | 7 | 25 | 7 | 7 | 0 |
| *ԱՐԱՐԱՏԻ ՄՈՎ* | *64* | *30* | *44* | *19* | *20* | *11* |
| Արմավիր | 60 | 28 | 58 | 28 | 2 | 0 |
| Բաղրամյան | 3 | 5 | 3 | 5 | 0 | 0 |
| Վաղարշապատ | 14 | 14 | 7 | 7 | 7 | 7 |
| Մեծամոր | 7 | 3 | 5 | 1 | 2 | 2 |
| *ԱՐՄԱՎԻՐԻ ՄՈՎ* | *84* | *50* | *73* | *41* | *11* | *9* |
| Գավառ | 2 | 2 | 2 | 2 | 0 | 0 |
| Ճամբարակ | 0 | 1 | 0 | 1 | 0 | 0 |
| Մարտունի | 3 | 3 | 3 | 3 | 0 | 0 |
| Սևան | 2 | 10 | 1 | 10 | 1 | 0 |
| Վարդենիս | 3 | 4 | 3 | 4 | 0 | 0 |
| *ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՈՎ* | *10* | *20* | *9* | *20* | *1* | *0* |
| Վանաձոր | 23 | 34 | 15 | 22 | 8 | 12 |
| Գուգարք | 6 | 5 | 3 | 5 | 3 | 0 |
| Թումանյան | 10 | 7 | 10 | 7 | 0 | 0 |
| Սպիտակ | 8 | 8 | 5 | 6 | 3 | 2 |

| Ոստիկանության ՄՎ, բաժին | ընդամենը | | հանցագործութ | | իրավախախտում | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2011 | 2012 | 2011 | 2012 |
| Ստեփանավան | 4 | 2 | 3 | 2 | 1 | 0 |
| Տաշիր | 5 | 3 | 4 | 2 | 1 | 1 |
| *ԼՈՌՈՒ ՄՈՎ* | *56* | *59* | *40* | *44* | *16* | *15* |
| Հրազդան | 40 | 18 | 36 | 13 | 4 | 5 |
| Կոտայք | 12 | 8 | 12 | 8 | 0 | 0 |
| Նաիրի | 9 | 14 | 5 | 4 | 4 | 10 |
| Չարենցավան | 9 | 7 | 6 | 4 | 3 | 3 |
| *ԿՈՏԱՅՔԻ ՄՈՎ* | *70* | *47* | *59* | *29* | *11* | *18* |
| Գյումրի | 53 | 44 | 41 | 34 | 12 | 10 |
| Ախուրյան | 9 | 4 | 7 | 4 | 2 | 0 |
| Ամասիա | 2 | 1 | 2 | 1 | 0 | 0 |
| Անի | 5 | 1 | 2 | 1 | 3 | 0 |
| Աշոցք | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Արթիկ | 4 | 6 | 4 | 6 | 0 | 0 |
| *ՇԻՐԱԿԻ ՄՈՎ* | *74* | *56* | *57* | *46* | *17* | *10* |
| Կապան | 1 | 12 | 1 | 4 | 0 | 8 |
| Գորիս | 11 | 10 | 8 | 6 | 3 | 4 |
| Մեղրի | 5 | 4 | 5 | 4 | 0 | 0 |
| Սիսիան | 2 | 2 | 2 | 2 | 0 | 0 |
| *ՍՅՈՒՆԻՔԻ ՄՈՎ* | *19* | *28* | *16* | *16* | *3* | *12* |
| Եղեգնաձոր | 2 | 4 | 2 | 3 | 0 | 1 |
| Վայք | 3 | 8 | 2 | 8 | 1 | 0 |
| Ջերմուկ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| *ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՈՎ* | *5* | *12* | *4* | *11* | *1* | *1* |
| Իջևան | 4 | 2 | 3 | 2 | 1 | 0 |
| Նոյեմբերյան | 4 | 1 | 4 | 2 | 0 | 0 |
| Տավուշ | 3 | 2 | 2 | 1 | 1 | 0 |
| Դիլիջան | 1 | 2 | 1 | 0 | 0 | 2 |
| *ՏԱՎՈՒՇԻ ՄՈՎ* | *12* | *5* | *10* | *5* | *2* | *0* |
| *Տրանսպորտի ՈՎ* | *4* | *2* | *4* | *0* | *0* | *2* |
| *<<Զվարթնոց>> ՈԲ* | *2* | *2* | *2* | *2* | *0* | *0* |
| *ԿՀԴՊ ԳՎ* | *251* | *112* | *251* | *112* | *0* | *0* |
| *Ընդամենը* | *995* | *717* | *871* | *575* | *124* | *142* |

Աղյուսակ 2. Ոստիկանության տարածքային մարմինների կողմից հայտնաբերված թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների և իրավախախտումների թվային պատկերը

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունից, ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>>-ից, ՀՀ <Փորձագիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունից ստացված տեղեկությունների համաձայն 2012թ. 6 ամիսների ընթացքում հանրապետության իրավապահ մարմինների կողմից թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների հայտնաբերման արդյունքում ապօրինի շրջանառությունից ընդհանուր առմամբ առգրավվել և փորձաքննության է ներկայացվել **5 կգ 586 գրամ** տարբեր տեսակի թմրամիջոց, **18.8 գր** հոգեմետ նյութ, **207.3** միլիլիտր պրեկուրսոր /քացախաթթվի անհիդրիդ, աղաթթու/, 2011թ. 6 ամիսներին համապատասխանաբար՝ **13 կգ 42** գրամի, **26.7** գրամի և **668.4** միլիլիտր պրեկուրսորի դիմաց:




Գրաֆիկ 4. Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ապօրինի շրջանառությունից հայտնաբերված և առգրավված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների քանակական /գրաֆիկական/ պատկերը

| ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԸ | 2011թ. 6 ամիս /գր/ | 2012թ. 6 ամիս /գր/ | +, - |
|---|---|---|---|
| *Մարիխուանա* | 6083.9 | 2999.1 | -3084.8 |
| *Հաշիշ* | 119.1 | 90.8 | -28.3 |
| *Հաշիշային յուղ* | 69.54 | 26.9 | -42.64 |
| *Ափիոն* | 907.8 | 2442.3 | +1534.5 |
| *Ացետիլացված ափիոն* | 24.69 | 12.2 | -12.49 |
| *Մորֆին* | 0 | 0.018 | +0.018 |
| *Հերոին* | 550.1 | 4.65 | -545.45 |
| *Կոկաին* | 2.11 | 0.32 | -1.79 |
| *Կոդեին* | 14.3 | 8.3 | -6.0 |
| *Մեթադոն* | 0.015 | 0.04 | +0.025 |

| | | | |
|---|---|---|---|
| *Օմնոպոն* | 0 | 0.3 | +0.3 |
| *Բուպրենորֆին* | 29.3 | 0.422 | -28.8 |
| *Մետամֆետամին* | 1241.7 | 1.3 | -1240.4 |
| *Ամֆետամին* | 3999.9 | 0 | -3999.9 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **13042.4** | **5586.6** | **-7455.8** |

Աղյուսակ 3. Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ապօրինի շրջանառությունից հայտնաբերված և առգրավված թմրամիջոցների ցանկը

Այսպես կոչված <<ծանր>> թմրամիջոցներից <<ափիոնը>>, <<ամֆետամինը>> հիմնականում /98%/ ապօրինի ներկրվում է Իրանի Իսլամական Հանրապետությունից ինչպես ցամաքային այնպես էլ օդային ճանապարհով, <<հերոին>> տեսակի թմրամիջոցը քիչ քանակությամբ ներկրվում է Թուրքիայից ցամաքային ճանապարհով, իսկ սինթետիկ թմրամիջոցներից <<սուբուտեքս>> տեսակի թմրամիջոցը, որի առգրավումը վերջին տարիներում ավելացել է՝ օդային ճանապարհով ներկրվում է Ֆրանսիայից:

Հաշվետու ժամանակաշրջանում թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության է ենթարկվել **319** անձ, որից **64**-ը՝ նախկինում դատապարտված անձիք են /2011թ. 6 ամիսներին՝ **332**-ը, որից **59**-ը՝ նախկինում դատապարտվածներն են/, **11**-ը՝ օտարերկրացի են /2011թ. 6 ամիսներին՝ **11**-ը/, **18**-ը կանայք են /2011թ. 6 ամիսներին՝ **7-ը**/, իսկ անչափահասների ներգրավվածությունը նախորդ տարվա վեց ամիսների համեմատ նվազել է 3-ով /2011թ. 6 ամիսներին ՝ **4,** 2012թ. 6 ամիսներին՝ **1**/:

ՀՀ քր. օր-ի 266 հոդվածի հատկանիշներով քրեական պատասխանատվության է ենթարկվել **94** անձ /2011թ. 6 ամիսներին՝ **122** անձ/, որից **16**-ը՝ նախկինում հանցագործություն կատարած անձինք են /2011թ. 6 ամիսներին՝ **21-ը**/:

| | **2011թ. 6 ամիս** | | **2012թ. 6 ամիս** | |
|---|---|---|---|---|
| | անձինք | տոկոսը | անձինք | տոկոսը |
| ***Ընդամենը*** | **332** | X | **319** | X |
| *Այդ թվում կին* | 7 | 2.1 | 18 | 5.6 |
| *Անչափահաս* | 4 | 1.2 | 1 | 0.3 |
| *18-ից 24 տարեկան* | 21 | 6.3 | 27 | 8.4 |
| *25-ից 29 տարեկան* | 30 | 9.1 | 32 | 10.0 |
| *30-ից 49 տարեկան* | 217 | 65.3 | 199 | 62.4 |
| *50-ից բարձր* | 60 | 18.1 | 60 | 18.9 |
| *Օտարերկրացի* | 11 | 3.3 | 11 | 3.4 |

Աղյուսակ 4. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց տարիքային կազմը




Գրաֆիկ 5. Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց սոցիալական կազմը

ՀՀ առողջապահության նախարարության <<Հոգեբուժական բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> պետական ոչ առևտրային կազմակերպություն ներկայացված անձանց օրգանիզմում հայտնաբերված թմրամիջոցների վերաբերյալ թվային պատկերը ցույց է տալիս, որ նվազել է ներարկային եղանակով թմրամիջոց գործածողների թիվը, որը աշխարհում մյուս երկրներում ունի աճի միտում:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության <<Հոգեբուժական բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկայի կողմից ներկայացված տվյալների 01.01.2012թ. դրությամբ թմրամոլ ախտորոշմամբ հաշվառման մեջ են 3867 անձ:

| Հաշվետու ժամանակը | օգտագործել են թմրամիջոց /անձ/ | կանաբիսի խումբ | ափիատի խումբ | սինթետիկի խումբ |
|---|---|---|---|---|
| 2011թ. 6 ամիս | **546** | **285 /52.2 %/** | **218 /39.9 %/** | **43 /7.9 %/** |
| 2012թ. 6 ամիս | **500** | **303 /60.6 %/** | **180 /36.0 %/** | **17 /3.4 %/** |

Աղյուսակ 5. Հաշվառման վերցված առանց բժշկի նշանակման թմրամիջոց գործածող անձանց թվային պատկերը՝ ըստ թմրամիջոցի տեսակի




Գրաֆիկ 6. Հաշվառման վերցված առանց բժշկի նշանակման թմրամիջոց գործածող անձանց թվային պատկերը` ըստ թմրամիջոցի տեսակի




Գրաֆիկ 7. Առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ գործածող անձանց տարիքային կազմը

<<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օր-ի 110 պրիմ 2 հոդվածի հատկանիշներով 2011թ. 6 ամիսներին գրանցվել է **1** դեպք, 2012թ. 6 ամիսներին` **0** դեպքի դիմաց: Նույն օրենքի 44.1, 44.2 հոդվածների հատկանիշներով 2011թ. 6 ամիսներին գրանցված **123** դեպքի դիմաց 2012թ. 6 ամիսներին արձանագրվել է **142** իրավախախտման դեպք:



| Թմրամիջոցի տեսակը | Գինը |
|---|---|
| Կոկաին /1գր/ | 250-300 ԱՄՆ $ |
| Ափիոն /1 գր/<br>մեծածախ /1գր/ | 50-80 ԱՄՆ $<br>25-30 ԱՄՆ $ |
| Կակաչի ծղոտ /1 գր/ | 80 ԱՄՆ ցենտ |
| Հոլանդական մարիխուանա /1 գր/<br>մեծածախ /1գր/ | 40-50 ԱՄՆ $<br>30 ԱՄՆ $ |
| Մարիխուանա /1գր/<br>մեծածախ /1գր/ | 20-25 ԱՄՆ $<br>10-12 ԱՄՆ $ |
| Հաշիշ /1 գր/ | 40-50 ԱՄՆ $ |
| Մորֆի /1 %, 1 սրվակ/ | 15-20 ԱՄՆ $ |
| Հերոին /1 գր/<br>մեծածախ /1գր/ | 100-110 ԱՄՆ $<br>50-60 ԱՄՆ $ |
| Սուբուտեքս / 1 հաբ/<br>մեծածախ /1գր/ | 100-110 ԱՄՆ $<br>50-60 ԱՄՆ $ |
| Տրամադոլ /10 հաբ/ | 13 ԱՄՆ $ |
| Էքստազի /1 հաբ/<br>մեծածախ /1հաբ/ | 50 ԱՄՆ $<br>20-25 ԱՄՆ $ |

Աղյուսակ 6. Թմրամիջոցների գները հանրապետության «սև» շուկայում

| ՀՀ Քր.օր-ի հոդվածներ | Վերնագիր |
|---|---|
| 266 | Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը |
| 267 | Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, ինչպես նաեւ այդպիսիք պատրաստելու համար օգտագործվող եւ հատուկ հսկողության տակ գտնվող նյութեր, սարքավորումներ կամ գործիքներ արտադրելու, ձեռք բերելու, պահելու, հաշվառելու, բաց թողնելու, փոխադրելու կամ առաքելու կանոնները խախտելը |
| 268 | Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի |
| 269 | Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր հափշտակելը կամ շորթելը |
| 269.1 | Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամ դրանց պրեկուրսորներ ստանալու իրավունք տվող փաստաթղթեր ապօրինի պատրաստելը, օգտագործելը, կեղծելը կամ կեղծված փաստաթղթեր իրացնելը |
| 270 | Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ստանալու իրավունք տվող դեղատոմսեր կամ այլ փաստաթղթեր ապօրինի տալը |
| 272 | Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը հակելը կամ ներգրավելը |
| 273 | Մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը |
| 274 | Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելը կամ պահելը |
| ՀՀ վարչ. օր-ի հոդվածներ | Վերնագիր |
| 44.1 | Մանր չափերով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի |
| 44.2 | Առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելը |
| 110 պրիմ 1 | Թմրանյութեր պարունակող ցանքերի հսկողության ապահովման ուղղությամբ միջոցներ չձեռնակելը |
| 110 պրիմ 2 | Ապօրինաբար ձիթախաշխաշ կամ կանեփ ցանելը կամ աճեցնելը |
| 179 պրիմ | Պոռնկությամբ զբաղվելը |

Աղյուսակ 7. Քրեական և վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքերից քաղվածքներ